ՆՈՒԽԻ ԵՎ ԱՐԵՇ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

/1917 ԴԵԿՏԵՄԲԵՐ -1918 ԱՊՐԻԼ/

Հայ ժողովրդի մի հատվածի կյանքը կապված է եղել բուն Աղվանք երկրամասի՝ Հայաստանին սահմանակից Նուխի[1] և Արեշ[2] գավառների հետ, ուր տեղական բազմալեզու ցեղերի հետ միասին, վաղնջական ժամանակներից սկսած, բնակվել են նաև հայերը[3]:

19-րդ դարասկզբին Ռուսական կայսրությունն Անդրկովկասում իր տիրապետությունը հաստատելուց հետո, 1867 թ. դեկտեմբերի 9-ի հրամանագրով կատարում է վարչա-տարածքային նոր բաժանումներ[4], որի արդյունքում 1868 թ. ստեղծվում է Ելիզավետպոլի նահանգը՝ 38340 քառ. կմ տարածքով, Ելիզավետպոլի, Շուշիի, Ջիվանշիրի, Զանգեզուրի, Ղազախի, Կարյագինոյի և Կուր գետի ձախափնյա շրջանում գտնվող Նուխի և Արեշ գավառներով[5]:

Նուխի գավառը գտնվում էր Ելիզավետպոլի նահանգի հյուսիս-

---

1 *Նուխի տեղանունը վաղ ժամանակներում գործածվել է նաև Շեքի-Շաքի անվանաձևով: Հետագայում՝ Նուխի: 1968 թ. ադրբեջանական իշխանությունները այն կրկին վերանվանել են՝ Շեքի:*

2 *Արեշ կամ Արաշ տեղանունը գործածվել է նաև Արժանաս անվանաձևով /Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 17 /:*

3 Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 13:

4 Нагорный Карабах в 1918-1923 г.г. Сборник материалов и документов, ответств. ред. док. ист. наук, проф. В. А. Микаелян, сост. В. А. Акопян, О. С. Баликян, А. С. Вирабян, В. А. Микаелян, В. С. Эвоян, Ереван, 1922, стр. XII.

5 М. С. Сапшовичь, Весь Кавказъ, Баку, 1914, ст. 346.

արևելյան ծայրում, գավառի կենտրոնն էր Նուխի քաղաքը: Արեշի գավառը նույնպես գտնվում էր նահանգի հյուսիսային մասում՝ Նուխի, Գանձակ և Ջիվանշիր գավառների միջև՝ արևելյան կողմից սահմանակից լինելով Բաքվի նահանգի Գյոքչա գավառին[6]:

1918 թ. հունվարի 1-ի[7] դրությամբ Նուխի գավառի հայությունը կազմում էր 26760, Արեշում՝ 19161 շունչ[8]: Երկու գավառներում էլ կային 52 հայաբնակ գյուղեր[9]: Հայկական պատմա-ճարտարապետական հուշարձաններով հարուստ Նուխի-Արեշում կար 53 հայկական եկեղեցի[10], որոնցից երկուսը՝ Նուխի քաղաքում[11]:

Մահմեդականները, որոնք գերակշռում էին երկու գավառներում, 18-րդ դարից սկսած, օգտվելով քաղաքական անկայուն վիճակից, հետևողականորեն, կոտորածի ահի տակ մահմեդականացրել էին մի շարք հայկական գյուղեր[12]: «Դեռևս 17-18-րդ դարերում,- գրում է Բաքվի «Արև» օրաթերթը,- թուրք անգիտակից խուժանը իր ապիկար և մոլեռանդ հովիվների առաջնորդությամբ շատ գյուղեր մահմեդականացրել էր: Նուխվա գավառի Քիլ /Գիս/, Կոխմուխ,

---

6 *Ա-դո. Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում՝ 1905-1906 թթ. /փաստագրական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով/, Երևան, 1907, էջ 386, նաև* Памятная Книжка Елизаветпольской губернии на 1910 г. Елизаветполь, 1910, стр. 37.

7 Кавказский календарь на 1917 г. Тифлись, 1916, стр. 190-197.

8 *1916-1918թթ. ժամանակահատվածում Նուխի և Արեշ գավառների հայ բնակչության թվամանակի վերաբերյալ պատմական գրականության մեջ հանդիպում են հակասական տվյալներ: Արխիվային փաստաթղթերում /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 22, թ. 41 / հիշատակվում է 50-60 հազար: Նուխիի հոգևոր վարչության վիճակագրության համաձայն՝ 50192 /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 2 /: Աբրահամ Գյուլխանդանյանն իր աշխատության մեջ /Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», 1941, թիվ 5, էջ 73 / Նուխի գավառում հիշատակում է 34 000, Արեշում՝ 15 000:*

9 Кавказский календарь на 1915 г. Тифлись, 1914, стр. 184-214, *նաև* Մ. Կարապետյան, *Հովհ. Թումանյանը հայկական կոտորածի մասին, ՊՀՀ, Երևան, 1987, թիվ 2, էջ 244:*

10 Մ. արք. Օրմանեան, *Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 266:*

11 Մ. Բարխուտարեանց, *Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 264:*

12 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 375, ց. 1, գ. 89, թ. 5, նաև* Մ. Բարխուտարեանց, *Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 291:*

Բդեզ /Պարտեզ/[13], Վարդանլու[14] և այլն»: Այնուհետև շարունակում է. «Պարզ է, որ Աղվանից երկրի հայության վերջին մնացորդը անդունդի եզերքին է կանգնած»: Ընդ որում, այդ ամենն ուղեկցվել էր նաև հայկական եկեղեցիների ավերումներով: Այդ առիթով արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գերմանացի ճանապարհորդ, գրող բարոն Ավգուստ Ֆոն-Հաքստդաուզենը, որը 1843-44 թթ. ճանապարհորդել է Անդրկովկասում[15]: Նա գրում է. «... Բոսդաղի լեռնաշղթայի ամբողջ գծով և Շամախու լեռներում գտնվում են հայկական բնակավայրեր և գյուղեր: Բոսդաղում և Շաքիի պրովինցիայում սկսած Նուխիից մինչև Ղատմաս /Խաչմազ -Գ. Ստ./ ամենուր հանդիպում են քրիստոնեական եկեղեցիների ավերակներ, որոնք պատկանում էին անհետացող հայկական բնակավայրերին...»[16]:

Հայահալած քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա ժամանակներում, մասնավորապես 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, որի հետևանքով Արեշ գավառի Հավարիկ, Քանդակ, Մարզուղի, Էրմանի-Բազար /Արաշ/, Խանաբադ և Մամաթավա հայկական գյուղերը թաթարական խուժանի կողմից ենթարկվեցին կոտորածի և կողոպուտի[17]:

Հայ-թաթարական լարվածությունը Անդրկովկասում և մասնավորապես Նուխի-Արեշի գավառներում ավելի սրվեց հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Դրան նպաստեց նաև այն, որ առաջին

---

13 *Բդեիզ գյուղը բռնի մահմեդականացվել է 1890 թ. /Մ. Բարխուտարեանց. Աղուանից երկիր ..., էջ 291/:*

14 *Վարդանլու գյուղը հիմնականում բռնի մահմեդականացվել է 1764 թ. /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 375, ց. 1, գ. 89, թ. 6/, բայց 19-րդ դարում և մինչև 1918 թ. այնտեղ բնակվում էին սակավաթիվ հայեր:*

15 *Բարոն Ավգուստ Ֆոն-Հաքստհաուզենը Հայաստանում եղած ժամանակ հյուրընկալվել է հայ մեծանուն գրող Խաչատուր Աբովյանին, որը և ուղեկցել է նրան ճանապարհորդության ընթացքում:*

16 Барон Август Фон-Гакстгаузен, Закавказский край, часть I, Санктпетербургъ, 1857, стр. 208-209.

17 Ա.-Դ.Ո, *նշվ. աշխ., էջ 384-386, նաև* А. А. Закарян, А. И. Щахназарян, Бакинская газета «Наше время» о погромах нухинских, арешских и геокчайских армян в 1918 г. *ԼՀԳ, Երևան, 1989, թիվ 1, էջ 82, նաև «Արև», հունիսի 1, 1918, թիվ 102, նաև* Ա. Գյուլխանդանյան, *Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մեջ, «Հայրենիք», 1934, թիվ 3, էջ 137:*

աշխարհամարտում պարտվող Թուրքիան, օգտվելով Ռուսական կայսրության ներսում տիրող քաղաքական անկայուն իրավիճակից, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի փլուզումից, է՛լ ավելի ծավալեց պանթուրքիզմի քարոզչությունը մահմեդական շրջաններում: Ինչպես վկայում են վավերագրերը՝ «Թուրքական էմիսարները և սպաները հետևողականորեն աշխատում էին Կովկասում՝ ռուսական Ադրբեջանում, Երևանում, Ելիզավետպոլում և Բաքվում»[18]: «Օգտվելով ռազմաճակատում ռուսական ուժերի կտրուկ անկումից,- գրում է Հ. Ավետիսյանը, - Կովկասի կառավարողների անկախության ձգտումներից, որին մղում էր Թուրքիան, Գերմանիայի հովանու տակ գլուխ բարձրացրած Օսմանյան կայսրությունը լարեց բոլոր ջանքերը, Կովկասում համաիսլամական քարոզչության խորացման համար»[19]:

Երիտթուրքերի հենարանն Անդրկովկասում «Մուսավաթ» կուսակցությունն էր, որը ջանք ու եռանդ չէր խնայում՝ արագացնելու թուրքական ներխուժումը Անդրկովկաս:

Վավերագրի վկայությամբ՝ «թաթարները, որոնք ղեկավարվում էին իրենց գլխավոր քաղաքական կուսակցության՝ մուսավաթի կողմից, խորապես գիտակցում էին, որ, լինելով մուսուլմաններ, իրենք չեն կռվի թուրքերի դեմ, առավել ևս այն պահին, երբ ռուսական զորքերի հեռանալու պատճառով միանգամայն որոշակի էր նրանց հաղթանակի մոտալուտ լինելը»[20]:

Ջենք ձեռք բերելու, թուրքերի առաջխաղացումը արագացնելու և թիկունքում անիշխանություն առաջ բերելու նպատակով թաթարների առաջին քայլերից մեկը ճակատներից վերադարձող ռուս զինվորների գնացքների վրա կատարվող ավազակային հարձակումներն էին՝ սկսած Հաջի-Կաբուլ կայարանից մինչև Աղստաֆա, որի հետևանքով զոհ գնացին մեծ թվով ռուս զինվորներ, կողոպտվեց մեծ քանակությամբ զենք և զինամթերք[21]: Բոլոր նման գործողու-

---

18 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29, թ. 3:*

19 *Հ. Ա. Ավետիսյան, Երիտասարդ թուրքերի և մուսավաթի համաթուրքական գործակցությունը և հայահայ ոճրագործությունը 1918 թ., ՊԲՀ, Երևան, 1991, թիվ 1, էջ 47:*

20 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29, թ. 6-7:*

21 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 117 թ. 2, նաև ֆ. 45, ց. 1, գ. 5, թ. 4:*

թյունները ղեկավարվում էին այդ օրերին Ելիզավետպոլում իր գործունեությունն սկսած մուսուլմանական հասարակական կոմիտեի կողմից[22]: Ըստ գեներալ Կուլեբյակինի՝ «Ելիզավետպոլի նահանգում համարյա ամբողջ մահմեդականությունը զինված էր»[23]:

Փակելով Բաքու-Թիֆլիս ճանապարհը և այդ հատվածում գտնվող գավառները կտրելով դրսի աշխարհից՝ մուսավաթականները սկսեցին եռանդագին իրագործել իրենց հայաջինջ քաղաքականությունը:

Հայ-թաթարական լարվածությունն իր գագաթնակետին էր հասել Ելիզավետպոլի նահանգում: Նկարագրելով այդ օրերին Ելիզավետպոլի նահանգում հայ բնակչության ծանր դրությունը, Դ. Անանունը գրում է. «Թուրքիայի գործակալները խուժանն ուղղում էին ոչ միայն զորքի դեմ, այլև հայ ճանապարհորդների: Դեկտեմբերի վերջին այլևս ոչ մի հայ չէր համարձակվում անցնել Ադրբեջանի տերիտորիան կտրող առանձին երկաթուղով: Խիզախ հային սպասվում էր մահ: Միաժամանակ թուրքական խուժանը միջցեղային կռիվ սկսեց Արեշի գավառում և Շամախի քաղաքում»[24]:

Դրությունը տագնապալից էր մասնավորապես Նուխի և Արեշ գավառներում, ուր թաթարական խուժանը, օգտագործելով ամեն մի հնարավոր առիթ, հարձակում էր գործում հայ բնակիչների վրա, բարբարոսաբար սպանում ու կողոպտում նրանց բնակարանները[25]: Ահա ինչ է ասվում դեկտեմբերին Նուխիից Բանվորների և զինվորների պատգամավորների երկրային խորհրդին ուղղված գրություններում. «Վերջ պետք է տրվի արդյոք այն ներվային լարված դրությանը, որի մեջ գտնվում է Նուխու գավառի մի բուռն հայերը: Քաղաքը /Նուխին – Գ. Ստ./ ահաբեկման է ենթարկված զինված բանդաների /թաթարական – Գ. Ստ./ կողմից: Ժամը 6-ից փակվում են տներում, գիշերներն արթուն են մնում վախենալով կոտորածից...»[26]:

---

22 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96, նաև Բ. Իշխանյան, Հեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բաքու, 1918, էջ 184:*

23 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1 գ. 26, թ. 18:*

24 Դ. Անանուն, *Ռուսաստանի հասարակական զարգացումը /1901-1918/, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 667:*

25 *«Ժողովուրդ», հոկտեմբերի 23, 1918, թիվ 22:*

26 Լ. Ա. Լուրշուցյան, Ստեփան Շահումյան: *Գիտական և պարտիական գործունեությունը 1917-1918 թվականներին, Երևան, 1959, էջ 169:*

Սկսած 1917 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներից՝ Նուխի և Արեշ գավառների Ջաֆարաբադ, Զոլախլու, Այդին-Բուլաղ, Ենի-քենդ /Նոր շեն/, Ջուջամիշ, Օթմանլի, Ալյար, Վարդանլու, Ջովլան, Մալդ, Աղփիլաքյան, Հավարիկ, Մամաթավա, Մազուրդի, Նեմեյ-թաբադ և Խանավանդ հայկական գյուղերը թաթարների կողմից ենթարկվեցին ավերածությունների[27], իսկ Օրաբան[28] գյուղի հայերին կոտորածի աչի տակ բռնի մահմեդականացրին[29]:

Թաթարական հարձակումներից տուժեցին հատկապես Ջաֆարաբադ, Զոլախլու, Այդին-Բուլաղ, Ալյար և Աղփիլաքյան հայկական գյուղերը, ուր սպանվեցին տասնյակ հայեր[30]: Դեկտեմբերի վերջերին թաթարական հարձակումները հայաբնակ գյուղերի վրա էլ ավելի պարբերական բնույթ սկսեցին կրել:

Այս անգամ վերոհիշյալ հայաբնակ գյուղերից ինքնապաշտպանության դիմեցին Զոլախլուն և Այդին-Բուլաղը:

Թաթարական մեծաթիվ զինված խուժանը, հարձակվելով Զոլախլուի վրա, փորձեց գյուղը կրկին անգամ ենթարկել կողոպուտի: Գյուղացիները դիմեցին ինքնապաշտպանության: Համառ մարտերից հետո թաթարները մտնում են գյուղ և կատարում աննկարագրելի բարբարոսություններ, սպանում տղամարդկանց, իսկ գեղեցիկ կանանց ու աղջիկներին իրենց հետ տանում թաթարական գյուղերը: Նմանօրինակ վիճակում էր գտնվում նաև Այդին-Բուլաղը, որը թաթարների կողմից ենթարկվում էր կողոպուտի:

Այդին-բուլաղցիները, նույնպես դիմելով ինքնապաշտպանության, փորձեցին գյուղից դուրս վռնդել թաթար ելուզակներին: Ինքնապաշտպաններին օգնության հասան նաև դայաբաշցի 15 ձիավոր: Համառ կռիվներից հետո ինքնապաշտպաններին հաջողվում է

---

27 Ա. Գյուլխանդանյան, *նշվ. աշխ.*, էջ 111, *նաև* Ա. Մելիք-Ցոլյան, *Բագուի հերոսամարտը*, «*Հայրենիք*», *Գ տարի, թիվ 7, մայիս*, 1926, *էջ* 112, *նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ.* 121, *գ.*1, *գ.* 26, *թ.* 29, *նաև ֆ.* 375, *գ.*1, *գ.* 89, *թ.* 5, *նաև ֆ.* 245, *գ.* 1, *գ.* 3, *թ.* 2, 9, *նաև գ.* 12, *թ.*1, *նաև ֆ.* 221, *գ.*1, *գ.* 24, *թ.* 19:

28 *Օրաբան գյուղի հայ բնակչության մի մասը բռնի մահմեդականացվել էր դեռևս 18-րդ դարի վերջին /ՀՀ ՊՊԿԱ, ֆ.* 375, *գ.*1, *գ.* 89, *թ.* 5 /, *նաև ֆ.* 245, *գ.*1, *գ.* 8, *թ.* 55:

29 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ.* 245, *գ.*1, *գ.* 8, *թ.* 55, *նաև ֆ.* 375, *գ.*1, *գ.* 89, *թ.* 5:

30 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ.* 200, *գ.*1, *գ.* 597, *թ.* 55:

թաթարներին ետ շպրտել գյուղից: Սակայն թաթարները, օգնական ուժեր ստանալով, եռօրյա կռիվներից հետո, կրկին անգամ մտնում են գյուղ և կատարում անխնա սպանություններ, որից հետո գյուղը հրդեհում[31]: Կոտորածներից փրկվածները ապաստանեցին ավելի բազմամարդ հայկական գյուղերում: Նմանօրինակ բարբարոսությունները ղեկավարում էին թաթարական խուժանի հայտնի ավազակապետեր Նասիբն ու Մուսաբեգը[32]:

Թաթար խուժանի կողմից այդ ամենն ուղեկցվում էր հայկական գյուղերի կողոպուտով: Միայն հունվար ամսի հարձակումների հետևանքով հայկական գյուղերից տարան 1138 գլուխ անասուն, 52 փութ հացահատիկ[33]:

Թաթարական հարձակումներից զերծ չմնաց նաև ռուսական Ալեքսեևկա և Նեկրասով գյուղերը, որոնց բնակչությունը նույնպես, խուսափելով հետագա բռնություններից, գաղթեց Ռուսաստան[34]:

Ելնելով վերոհիշյալից՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը որոշեց բանակցությունների մեջ մտնել թաթարների ազգային խորհրդի հետ՝ ճշտելու հետագա հարաբերությունները, միևնույն ժամանակ ուղիներ մշակել հայ-թաթարական սպասվող ընդհարումների կանխման համար: Բանակցության վարման համար Հայոց ազգային խորհրդից ընտրվեցին դաշնակցական անդամներ Հովհ. Քաջազնունին, Արտ. Չիլինգարյանը /Ռուբեն Դարբինյան/, հայ ժողովրդական կուսակցությունից՝ Հայկ Տեր-Միքայելյանը և Ս. Տեր-Ղազարյանը, սոցիալիստ հեղափոխականներից՝ բժ. Լ. Աթաբեկյանը, և սոցիալ-դեմոկրատներից՝ Տիգրան Իսախանյանը: Թաթարների կողմից մասնակցում էին Մ. Թոփչիբաշևը, Մ. Հաջինսկին, Բ. Խան Ջիվանշիրը, Ի. Հայդարովը, Ա. Վեզիրովը և Բ. Բաբաևը: Առաջին նիստը տեղի ունեցավ 1918 թ. հունվարի 16-ին՝ Հայոց Մարդասիրական Ընկերության շենքում: Բանակցությունները, որ տևեցին շուրջ 40 օր, կողմերի մեջ եղած խոր հակասությունների պատճառով այդպես էլ ավարտվեցին անարդյունք, և որոշվեց. «Նկատի ունենալով, որ

31 «Հորիզոն», հունվարի 12, 1918, թիվ 7:
32 «Ժողովուրդ», հոկտեմբերի 23, 1918, թիվ 22, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 5, թ. 4:
33 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 5, թ. 4:
34 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 375, ց. 1, գ. 89, թ. 5, նաև ֆ. 245, ց. 1, գ. 3, թ. 5:

շուտով Թիֆլիսում պիտի բացվի Անդրկովկասյան սեյմը, որին մասնակցելու են այդ խորհրդակցության մեջ մասնակցող անդամներից շատերը, նկատի ունենալով, որ Թիֆլիսի մեջ էր գտնվում Հայոց Գերագույն մարմինը՝ Ազգային խորհուրդը, ընդհանուր խնդիրների վերջնական լուծումը նպատակահարմար համարվեց թողնելու այնպիսի հեղինակավոր մարմնի, ինչպիսին Անդրկովկասյան սեյմն էր»[35]:

Հայ-թաթարական լարվածությունը գավառներում և հատկապես Նուխի-Արեշում թուլացնելու նպատակով խորհրդակցությունը որոշեց՝ «պատգամավորներ ուղարկել այնտեղ՝ վեճերը թուլացնելու համար»[36]:

Նմանաբնույթ մի հանձնաժողով Ստ. Շահումյանի կողմից ուղարկվեց հիշյալ գավառները՝ ճշտելու գյուղերի ավերման պատճառները, նաև հայ-թաթարական հարաբերությունները կարգավորելու համար: Սակայն պատգամավորությունն Աղդաշից ստիպված ետ վերադարձավ՝ թաթարների կողմից ճանապարհները փակվելու պատճառով[37]: Սակայն ո՛չ այդ բանակցությունները, ո՛չ էլ պատգամավորների կատարած աշխատանքները ոչ մի արդյունք չտվեցին, քանզի թաթարները երկդիմի դիրք էին բռնել, մի կողմից հանդես գալով հաշտարարի դերում, մյուս կողմից՝ է՛լ ավելի էին ակտիվացնում իրենց հակահայ գործողությունները ինչպես Բաքվի նահանգում, այնպես էլ նրա հարակից Նուխի-Արեշում:

Հայ բնակչության նկատմամբ բռնությունները զանգվածային բնույթ սկսեցին կրել փետրվար ամսից: Հավատարիմ մնալով մեծ եղբոր՝ երիտթուրքերի գործելակերպին, նրանք առաջին հերթին շարքից հանեցին հիշյալ գավառների մտավորականությանը: Այսպես, փետրվարի 13-ին եղեռնական մահով Նուխի գավառի Նիժ գյուղում սպանվում են Միքայել Պետրոսյանը, Անդրկովկասյան սեյմի անդամ Գաշիմ-Բեկ Ամիրջանովը, Սաշա-Բեկ Մելիք-Ասլանյանը և Ա. Ալավերդյանը[38]:

---

35 Ա. Գյուլխանդարյան, *նշվ. աշխ.*, էջ 113:
36 *Նույն տեղում*, էջ 114:
37 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 597, թ. 55:*
38 *«Աշխատավոր», մայիսի 21, 1918, թիվ 49, նաև «Մշակ», փետրվարի 27, 1918, թիվ 43:*

Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, ելնելով վերոհիշյալից, քաջ գիտակցելով, որ հաշտարար բանակցությունները այլևս ոչ մի արդյունք չեն տալիս, այլ ընդհակառակը՝ մուսավաթականներն սկսում են անցնել ավելի լայնածավալ գործողությունների, որոշում է զինել ինչպես Բաքվի նահանգի, այնպես էլ Նուխի և Արեշ գավառների հայ բնակչությանը: Ինքնապաշտպանության խնդրով մտահոգված՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդն իր հերթական նիստում քննարկում է այդ հարցը: Խորհրդի նիստում ոչ-դաշնակցական անդամներն այն կարծիքին էին, որ Նուխի-Արեշի հայությանը պետք է զինել օրինավոր ճանապարհով, իսկ դաշնակցականները, չմերժելով այդ տեսակետը և, սակայն, չհավատալով, որ այդպես հնարավոր կլինի, առաջարկեցին զինել սեփական միջոցներով[39]:

Նույն խնդրով մտահոգված՝ Թիֆլիսում գործող Նուխի-Արեշի հայրենակցական ժամանակավոր կոմիտեն /նախագահ՝ Սիմոն Շխյանց/[40] դիմում է Հայոց ազգային խորհրդին և նորաստեղծ Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանին՝ խնդրելով, որ «թույլատրվի ստանալ իրավունք ումնից հարկն է մի բատալյոն կազմել»[41]: Ընդառաջելով Ժամանակավոր կոմիտեի խնդրանքին՝ Հայոց ազգային խորհուրդն ու Թ.

---

39 Ա. Գյուլխանդանյան, *նշվ. աշխ., էջ 83:*

40 *Սիմոն /Սուրեն/ Շխյանը ծնվել է 1866 թ. Նուխիում: Սկզբնական կրթությունը ստացել է Գանձակի ուսուցչական սեմինարիայում, որն 1887 թ. ավարտելով, զբաղվել է մանկավարժությամբ: 1882 թ. մեկնել է Շվեյցարիա և ուսանել ժենևի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: Ուսանելու տարիներին ծանոթանում է Հ. Յ. Դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմի /Ստեփան Զորյան/ հետ և աշխատակցում «Դրոշակ» թերթի խմբագրական աշխատանքներին: 1896 թ. մեկնում է ԱՄՆ՝ դառնալով այնտեղի առաջին դաշնակցական գործիչը, ուր և հիմնում է առաջին կոմիտեները: 1898 թ. վերադարձել է Թիֆլիս և մինչև 1914 թ. Ներսիսյան դպրոցում դասավանդել ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներ և մաթեմատիկական առարկաներ, միևնույն ժամանակ զբաղվել է գրական, թարգմանական աշխատանքով: Հայաստանի Հանրապետությունում խորհրդային կարգերի հաստատումից հետո մնացել է Երևանում: Մահացել է 1947 թ.:* Մ. Սանթրոսյան, *Ներսիսյան դպրոցի պատմությունը, Երևան, 1981, էջ 170, նաև Հ.* Տասնապետյան, *Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմութենեն մինչև ժ Ընդհանուր ժողովը /1890-1924/, Աթենք, 1988, էջ 234:*

41 *ՀՀ ՊՊՆԱ, ֆ. 245, ց. 1, գ. 3 թ. 1, 24, նաև ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 20:*

Նազարբեկյանը, քաջ գիտակցելով հայկական գումարտակի անհրաժեշտությունը Նուխի-Արեշում, դիմում են Անդրկովկասյան Կոմիսարիատին, որի թույլտվությամբ կազմվում է Նուխիի առանձին 4-րդ հրաձգային գումարտակը, որը համարվում էր հայկական կորպուսի մի բաղկացուցիչ մասը[42]: Այդ գործում իր ներդրումն ունեցավ նաև Վարդաշենցի գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը /Սիլիկով/: Փետրվարի սկզբներին գումարտակը, որը հիմնականում համալրված էր Նուխի-Արեշի հայ երիտասարդներից և Կովկասյան ռազմաճակատից Թիֆլիս վերադարձած Նուխի-արեշցի զինվորներով, անհրաժեշտ ռազմամթերքով Թիֆլիսից Ալազան գետի վրայով անցնում է Նուխի և Արեշ[43]: Գումարտակի վաշտերը տեղաբաշխվել էին հայկական Ղայաբաշի, Սաբաթլու, Նիժ և Վարդաշեն գյուղերում[44]:

Սկզբնական շրջանում գումարտակի հրամանատարն էր գնդապետ Հովսեփյանը[45], որին հետագայում փոխարինեց ազգությամբ լատիշ Ի. Ի. Բրեդիսը[46]: Ճիշտ է, Հայրենակցական միության վարչությունը մայիսի 10-ի նիստում[47] գումարտակի հրամանատար էր նշանակել Ա. Սիլիկյանին[48], սակայն վավերագրերից երևում է, որ գումարտակի հրամանատար է մնացել գնդապետ Բրեդիսը[49]:

Նուխի-Արեշի հայ բնակչության անվտանգությունը թաթարական հնարավոր հարձակումներից ապահովելու նպատակով, դեռևս 1917 թ. փետրվար ամսին Բաքվում գործող Նուխի-Արեշի գյուղացիական կոմիտեն նույնպես մեծ աշխատանք էր կատարում: Հետագայում

---

42 *Նուխի-Արեշի առանձին հրաձգային գումարտակը կազմալուծվել է 1918 թ. նոյեմբեր ամսին /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, գ. 1, գ. 3, թ. 24/:*

43 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, գ. 1, գ. 3, թ. 1, 24:*

44 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, գ. 1, գ. 3, թ. 9:*

45 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, գ. 1, գ. 24, թ. 1:*

46 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, գ. 1, գ. 24, թ. 9:*

47 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, գ. 1, գ. 3, թ. 9:*

48 *Ա. Սիլիկյանը եղել է գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի եղբոր որդին, սպանվել է Զոցում 1919 թ. թուրքերի կողմից /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 206, գ. 1, գ. 85, նաև ֆ. 245, գ. 1, գ. 2, թ. 26/:*

49 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, գ. 1, գ. 3, թ. 16, 25, նաև ֆ. 221, գ. 1, գ. 24, թ. 19:*

նույն կոմիտեի անդամ Ա. Հակոբյանը, 1919 թ. հուլիսի 10-ի Նուխի-Արեշի հայրենակցական միության վարչության նիստում զեկուցելով ժողովրդին զինելու ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին, նշում է, թե «Մեր միությունը կազմակերպվել էր 1917 թ. փետրվարին, Լևոն Աթաբեկյանի օրոք: Միությունն ամեն կերպ աշխատում էր օգնել մեր հայրենակիցներին: Ստեփան Շահումյանի օրոք ուղարկել էինք մեր գավառները 14 փուրգոն ռազմամթերք, որը տեղ չի հասել դժբախտաբար՝ անձրևների, ցեխի և ճանապարհների անկանոնության ու բացակայության պատճառով»[50]:

Այսպիսով պարզ է դառնում, որ թե՛ ազգային խորհուրդները և թե՛ Բաքվի իշխանություններն ու Նուխի-Արեշի ժամանակավոր կոմիտեն, քաջ գիտակցելով հիշյալ գավառների ստրատեգիական նշանակությունը, ինչպես նաև մտահոգված հայկական գյուղերի հետագա ճակատագրով, փորձում էին հնարավորին չափ օգնել նրանց:

Նույն խնդիրներով մտահոգված՝ Նուխի-արեշցիները 1918 թ. փետրվար 26-ին Կովկասյան Բարեգործական Ընկերության դահլիճում հրավիրում են Նուխի-արեշցիների ընդհանուր ժողով, որտեղ որոշում են իրենց հետագա անելիքները[51]: Ժողովին մասնակցում էր նաև հայ նշանավոր գրող Վրթանես Փափազյանը[52]:

Ժողովն ավարտելով իր աշխատանքը՝ որոշում է ստեղծել Նուխի-արեշցիների հայրենակցական միություն: Նույն նիստում նորաստեղծ միությունն ընդունում է Վրթ. Փափազյանի մշակած բանաձևը, ըստ որի՝ նրա գործունեության հիմնական խնդիրներն էին՝ ժողովրդի ինքնապաշտպանությունը, հաղորդակցության կանոնավորումը և պարենավորման ու հանգանակության խնդիրների լուծումը[53]:

Մարտի 2-ին Ալ. Մանթաշյանի առնտրական դպրոցում տեղի է ունենում Նուխի-Արեշի հայրենակցական միության անդրանիկ

---

50 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 6, թ. 20:*

51 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 3, թ. 1-2:*

52 *Վր թ. Փափազյանը 1914-1917 թթ. հայոց պատմություն և գրականություն է դասավանդել Նուխիի եկեղեցական-ծխական երկսեռ միջնակարգ դպրոցում /Ե. Զարեհցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Վրթ. Փափազյանի ֆոնդ, թ. 177, նաև «Ցառաջ», ապրիլի 29, 1920, թիվ 89:*

53 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 3, թ. 1-2:*

նիստը՝ Հովսեփ Մելիք-Ջհանյանի նախագահությամբ, որտեղ հայրենակցական միության նախագահ է ընտրվում Ս. Ծխյանը, իսկ փոխնախագահներ՝ Հ. Մելիք-Ջհանյանը և Հայրիկ Տեր-Պողոսյանը[54]: Հետագայում, հայրենակցական միության վարչության մարտի 23-ի հերթական նիստում, փոխնախագահների պահանջով առաջարկվում է ընտրել երեք նախագահ՝ համահավասար իրավունքներով: Ձայների մեծամասնությամբ ընտրվում են Ս. Ծախյանը, որը պետք է զբաղվեր պարենավորման խնդիրներով, Մելիք-Ջհանյանը՝ զինվորական-ինքնապաշտպանական, և Ս. Տեր-Պողոսյանը՝ ճանապարհների և հաղորդակցության[55]:

Նուխի և Արեշ գավառներում հայերի և թաթարների միջև լարվածությունն ավելի մեծացավ 1918 թ. մարտ ամսից սկսած, երբ Բաքվում, իշխանությունը գրավելու նպատակով, բոլշևիկների և մուսավաթ կուսակցության միջև տեղի ունեցան քաղաքացիական կռիվներ[56]: Քանի որ բոլշևիկյան զորքի մեծամասնությունը կազմում էին արևմտյան ճակատից վերադարձած և ճանապարհները փակ լինելու պատճառով Բաքվում կուտակված հայ զինվորները, որոնց թիվը հասնում էր 10.000-ի, մուսավաթականները քաղաքացիական կռիվներին փորձեցին տալ ազգային բնույթ: Նրանք տարածեցին այն ստահոդ լուրերը, թե իբր «բոլշևիզմը միայն դիմակ է և Բաքվի շարժումը կրում է ազգային հակաթուրքական բնույթ»[57]: Բաքվում ծավալված մարտյան քաղաքացիական կռիվները իրենց արձագանքները գտան նաև նահանգի գավառներում, մասնավորապես Շամախիում և Գյոքչայում[58], որտեղ թաթարների կողմից հրահրված հայ-թաթարական ընդհարումները տարածվեցին նաև Գյոքչային հարակից Նուխի և Արեշ գավառներում:

Անկախ այն հանգամանքից, որ Վարդաշենում տեղակայված վաշտի հրամանատար Գաբրիել Տեր-Գրիգորյանի[59] ջանքերով այդ

---

54 *Նույն տեղում, թ. 3:*

55 *Նույն տեղում:*

56 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 86:*

57 *Նույն տեղում:*

58 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:*

59 *Գաբրիել Տեր-Գրիգորյանը հայտնի է նաև Տեր-Ռուբինյան ազգանունով: Կոտորածներից հետո գրել է «Նուխվա և Արեշի հայության ողբերգությունը»*

օրերին հրավիրվել էր հայերի և մուսուլմանների համատեղ ժողով՝ ազգամիջյան լարվածությունը թուլացնելու և հայ-թաթարական հարաբերությունները կարգավորելու նպատակով, սակայն դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ նման միջոցառումները չծառայեցին իրենց նպատակին[60]:

Օգտվելով այն հանգամանքից, որ հիշյալ գավառների հայկական գյուղերը շրջապատված էին թաթարական գյուղերով, զինված խուժանը /մոտ 500 հոգի/ ապրիլի 6-ին շրջապատում է Արեշ գավառի Մազրղի հայկական գյուղը և գյուղացիներից պահանջում՝ «հավատարիմ լինել կամ հանձնել զենքերը»[61]:

Քանի որ գյուղը շրջապատված էր թաթարական զինվորներով, անելանելի վիճակում հայտնված գյուղացիները, խուսափելով կոտորածից, որոշում են «երեսանց մուսուլմանություն ընդունել, բայց զենքերը չհանձնել»[62]: Մազրղեցիների մի մասը /մոտ 50 հոգի/, չհանդուրժելով կրոնափոխությունը, քահ. Տեր-Հովսեփյանի գլխավորությամբ հեռանում են գյուղից և Կուր գետի վրայով հասնում Գանձակ: Թաթարները մոլլաների գլխավորությամբ մտնում են գյուղ և հանում եկեղեցու զանգերը, պղծում եկեղեցին՝ այն վերածելով մզկիթի[63]:

«Կուր գետի ափին մեկուսի վեց հայ գյուղերից Մազարղին ընդունել է մահմեդականություն, ընտրելով կրոնափոխությունը մի միջոց իրեն շրջապատող թուրքերից չկոտորվելու համար»[64], գրում է Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետ Մսեղյանը ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ին:

Ցավալի է նշել, որ մահմեդականություն ընդունելուց հետո էլ

աշխատությունը, որին կցված է եղել մոտ 30 փաստաթուղթ և ներկայացրել «համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների ճնշիչ հանձնաժողովին» /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 20-21/: Ենթադրում եմ, որ հիշյալ աշխատությունը չի պահպանվել:

60 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 21 նաև «Ժողովուրդ», հոկտեմբերի 23, 1918, թիվ 22:*

61 *«Արև», հունիսի 1, 1918, թիվ 102, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1 գ. 79 թ. 128:*

62 *«Արև», հունիսի 1, 1918, թիվ 102:*

63 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 180, թ. 17:*

64 *Նույն տեղում:*

չդադարեցին կոտորածները[65]: Նույն օրերին թաթարական Դամադարա գյուղում թաթարները գազանորեն սպանում են գյուղում գտնվող Մեծ Սոկուլլիցի 12 հայերի[66]: Մազրոիի ճակատագրին արժանացան նաև հայկական Մամաթավա, Էրմանի Բազար /Արաշ/, Նեմեթաբադ և Խանավանդ գյուղերը, որտեղ տեղի ունեցան կոտորածներ և ավերածություններ: Մամաթավա գյուղում տեղի ունեցած կոտորածից հետո փրկված բնակչության մի մասը գաղթեց Ղայաբաշի, իսկ մի մասն էլ բռնի կերպով կրոնափոխ եղավ[67]: Հիշյալ գյուղի կոտորածից փրկված վարժուհին իր ծնողներին գրած նամակում, նկարագրելով կոտորածները, գրում է. «Քոի ափին հայ գյուղերը, որոնց թվում և Մամաթավան, ավերվեցին, իսկ ազգաբնակչության մի մասը կոտորվեց, մի մասն էլ գաղթեց Ղայաբաշի, մնացածն էլ կրոնափոխ եղավ»[68]:

Ելնելով այն իրողությունից, որ թաթարական հարձակումները Նուխի-Արեշում լայն ծավալ է ստացել, և հայկական գյուղերի բնակչությունը ստիպված ցանկանում է գաղթել Թիֆլիսի նահանգ, Նուխի-Արեշի հայրենակցական միության վարչությունը, մտահոգված գաղթականների ճակատագրով, որոշեց նրանց մի մասին տեղափոխել Ցարսկիե-Կոլոդեց: Այդ նպատակով Հ. Մելիք-Ջհանյանին հանձնարարվեց գնալ Սղնախ և Ցարսկիե-Կոլոդեց՝ գաղթականների կարիքները հոգալու համար: Գաղթականների կյանքը գաղթի ճանապարհներին ապահովելու նպատակով Հ. Մելիք-Ջհանյանի տրամադրության տակ դրվեց նաև Նուխիի առանձին հրաձգային գումարտակի պահակազորը, որը բաղկացած էր 12 զինվորներից: Ցարսկիե-Կոլոդեց գաղթեցին մասնավորապես Ջաֆարաբադի և Այդին Բուլաղի հայ բնակչության մի մասը[69]:

Թաթարների վայրագությունները շարունակվեցին նաև Քանդակ և Հավարիկ գյուղերում: Թաթարական խուժանը /մոտավորապես

---

65 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12 թ. 1, նաև գ. 5, թ. 10, նաև ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 35:

66 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12 թ. 1:

67 «Արև», հունիսի 2, 1918, թիվ 103, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 32, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 12 թ. 1,, նաև գ. 5, թ. 10,

68 «Արև» սեպտեմբերի 7, 1918, թիվ 177:

69 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 3, թ. 9:

1000 հոգի/, շրջապատելով հիշյալ գյուղերը, անխնա ոմբակոծության է ենթարկում՝ պահանջելով մահմեդականություն ընդունել կամ հանձնել զենքերը: Որպեսզի չարժանանան Մազրդեցիների ճակատագրին, գյուղացիները մերժում են թուրքերի պահանջը և դիմում ինքնապաշտպանության: Երեք օր շարունակ շրջապատված վիճակում 150 հայ կտրիճներ ինքնապաշտպանական մարտեր մղեցին թվով գերազանց թաթարների դեմ[70]:

Բաքվի «Արև» օրաթերթը, իր էջերում անդրադառնալով վերոհիշյալ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, գրում է. «Քյանդակ և Հավարիկ գյուղերը որոշում են կռվել, ոչ զենքերը հանձնել, ոչ էլ ընդունել մահմեդականություն: Եվ դիմում են հարևան Ղայաբաշ գյուղը, որ գան օգնության: 150 հայ կտրիճներ, շրջապատված 1000 ավելի թուրք զինված ու անզեն թալանչիներով, 3 օր ու գիշեր մաքառում են»[71]:

Օրհասական այդ օրերին, ապրիլի 6-ին, Ղայաբաշի մեծ գյուղերում Նուխի-արեշցիները հրավիրել էին միացյալ ժողով՝ ճշտելու ինքնապաշտպանության հետ կապված իրենց հետագա անելիքները: Նախքան ժողովի բուն հարցերի քննարկմանն անցնելը, ժողովականները որոշում են Ղայաբաշիի գումարտակի զինվորների մի մասին շտապ ուղարկել Հավարիկ և Քանդակ՝ օգնելու ինքնապաշտպաններին և միևնույն ժամանակ Մազուրդի, Մամաթավա գյուղերում ահաբեկված վիճակում գտնվող հայերին տեղափոխելու Ղայաբաշի[72]:

Շուրջ հինգ հարյուր հայ զինվորներ, գումարտակի սպաներ Ն. Սուրգուճովի և Ա. Ցակովբյանի գլխավորությամբ օգնության հասնելով Քանդակ և Հավարիկ գյուղերի անձնուրաց պաշտպաններին, օգնում են նրանց դուրս գալու շրջապատումից՝ գյուղերի ազգաբնակչության հետ միասին[73]: Թաթարական խուժանը, մտնելով գյուղերը, գազանաբար կոտորածի է ենթարկում 60 հայերի, որոնք չէին

---

70 *«Արև», հունիսի 2, 1918, թիվ 103, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 253, թ. 5:*
71 *«Արև», հունիսի 2, 1918, թիվ 103:*
72 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 32:*
73 *ՀՀ ՊՊԿԱ. ֆ. 245, ց. 1, գ. 5, թ. 10, նաև գ. 3, թ. 1, նաև «Արև», հունիսի 2, 1918, թիվ 103:,*

հասցրել գաղթել կամ էլ ի վիճակի չէին դուրս գալու գյուղերից[74]: Կոտորածի ենթարկվածների մեջ էին նաև օրորոցի երեխաներ[75]: Թաթարական նմանօրինակ բարբարոսությունն այնքան մեծ զայրույթ առաջացրեց գումարտակի հայ զինվորների մոտ, որ նրանք ետդաձի ճանապարհին վրեժխնդրորեն ավերում են թաթարական Զայ-Կայակոյունլու և Ջագիրլու /Ճագիվոլու/ գյուղերը, որտեղից սպասելի էին նոր հարձակումներ հայկական մնացյալ գյուղերի վրա[76]:

Ղայաբաշիում իր աշխատանքներն սկսած ժողովը, քննության առնելով գավառներում ստեղծված ռազմա-քաղաքական ծանր վիճակը, ելնելով այն իրողությունից, որ թաթարական հարձակումները նոր թափ են ստացել, և գյուղերի անկազմակերպ վիճակը կարող է նորանոր կոտորածներ և տեղահանության առիթ տալ, որոշում է. ա/ «միշտ պատրաստ լինել ամեն պատահարի դեմ, արթուն լինել թշնամու նկատմամբ և զինվել. բ/ մահմեդական մոլեռանդությանը վերաբերվել արհամարհանքով և օգնել այն գյուղերին, որոնք կվնասվին իսլամի այդ ֆանատիզմից, իսկ դրա համար կարելույն չափ լավ զինվել և պաշտպանողական դիրք բռնել. գ/ օսմանցիների վերաբերյալ լինել չեզոք և զինվոր չուղարկել Կովկասյան ֆրոնտ, որպեսզի չգրգռեն այսպիսով տեղական հարևան թուրքերին՝ դ/ հայ գյուղերի անկազմակերպվածությանը վերջ տալ՝ ստեղծելով գյուղական հեղինակավոր ուժեղ իշխանություններ»[77]:

Ժողովը քննարկեց նաև գյուղերում նոր կազմվելիք իշխանությունների խնդիրը և որոշեց ստեղծել «Զորեղ և անսահման հարատև իշխանություն՝ ամենալայն իրավունքներով»[78]: Ստեղծվող նոր

---

74 *Արեշ գավառի Էրմանի Բազար /Արաշ/, Խանավանդ, Մազրդու, Հավարիկ, Քանդակ և Նեմեյթաբադ հայաբնակ գյուղերի բնակչության մի մասը հետագայում գաղթեց Գանձակ: Հունիս-հուլիս ամիսների ընթացքում թուրքական զորքերը, գրավելով Նուխի-Արեշի գավառները, թույլ են տալիս վերոհիշյալ վեց հայկական գյուղերի բնակչությանը վերադառնալու իրենց հայրենի գյուղերը: Սակայն բերքահավաքից հետո, օգոստոս ամսին, նենգաբար նրանց կրկին անգամ ենթարկեցին կոտորածի /ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 128/:*

75 *«Արև», հունիսի 2, 1918, թիվ 103:*

76 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 245, ց. 1, գ. 5, թ. 10:*

77 *Նույն տեղում, ֆ. 221 ց. 1, գ. 24, թ. 32:*

78 *Նույն տեղում, թ. 33-34:*

իշխանությունը պետք է ունենար երեք աստիճան՝ ա/ գյուղական ազգային կոմիտե, բ/ շրջանային կոմիտե, գ/ Նուխիի և Արեշի գավառային հայկական կենտրոնական կոմիտե՝ բաղկացած երեք հոգուց[79]: Ժողովը կենտրոնական կոմիտեի անդամներ ընտրեց Գաբրիել Ռ. Տեր-Գրիգորյանին, Ն. Սուրգունովին.և Թ. Բադալյանին[80]: Գյուղերում կազմակերպչական հարցերով աշխատանքներ տանելու համար ընտրվում են երկու համաժողովներ՝ արևելյան, որի անդամներն էին Եղիշե քահ. Տեր-Հովսեփյանը, Արշակ Մկրտչյանը, Հայկ Մկրտչյանը, և արևմտյան, որի անդամներն էին Բախշի Բատյանը, Սաղիան Սարգսյանցը և Սարգիս Ջավադյանցը[81]: Ընդ որում որոշվեց, որ կենտրոնական կոմիտեն պետք է գտնվեր այնտեղ, ուր տեղակայված էր Նուխիի առանձին հրաձգային գումարտակի շտաբը և ամենասերտ կապերի մեջ պետք է գտնվեր նրա հետ: Նույնը վերաբերվում էր և շրջանային կոմիտեներին, որոնք պետք է համագործակցեին գումարտակի վաշտերի և դասակների հետ: Ժողովը քննության առավ նաև Ալազան գետի կամուրջի /պարոմ/ հարցը, որը կարող էր մեծ նշանակություն ունենալ ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նուխի և Արեշ գավառների հայության համար շրջապատումից դուրս գալու միակ ճանապարհը անցնում է Ալազան գետի վրայով, կայացվում է միաձայն որոշում՝ «Ալազան գետի վրայով գցել կամուրջ և այդ աշխատանքները հանձնարարել Գյոյբուլաղի, Դաշբուլաղի և Սաբաթլուի բնակիչներին /պատասխանատուներ՝ Հովսեփ Սաֆյան, Միրզա Քոչարյանց/[82]: Ուսումնասիրելով ժողովի ընթացքում քննարկված հարցերի և ինքնապաշտպանության կազմակերպման աշխատանքների ողջ բովանդակությունը, կարելի է եզրակացնել, որ հիշյալ գավառներում միացյալ հայկական ժողովն ինքնապաշտպանության խնդիրներով մտահոգված, ապրիլի 11-ին գումարում է նաև նորաստեղծ կենտրոնական գործադիր կոմիտեի և Նուխիի առանձին հրաձգային գումարտակի

79 *Նույն տեղում:*
80 *Նույն տեղում:*
81 *Նույն տեղում:*
82 *ՀՀ ԳԳԿԱ, ֆ. 245 ց. 1, գ. 3, թ. 6, նաև ֆ. 221, ց. 1, գ. 24, թ. 33-34:*

ղեկավարության համատեղ նիստ, որտեղ, քննարկելով ռազմաքաղաքական իրավիճակը գավառներում, որոշում է. «ա/խնդրել Թիֆլիսի և Բաքվի հայկական կոմիտեներին՝ օգնել գավառների հայ ազգաբնակչությանը՝ ով ինչպես կարող է. բ/ խնդրել Թիֆլիսի և Բաքվի հայկական կոմիտեներին իրենց գավառները ուղարկեն գոնե մեկ հրետանային մարտկոց»[83]:

Իր հերթին թաթարական ազգային խորհուրդը հետևողականորեն նախապատրաստվում է հիշյալ գավառներում կազմակերպելու հարձակումներ հայկական գյուղերի վրա: Այդ նպատակով Գանձակի նահանգը կտրում են դրսի աշխարհից: «Մոտ երկու ամիս է, Գանձակը կտրում են դրսի աշխարհից: Հայերի համար երկաթուղին չի աշխատում, ամբողջ գիծը թուրքերի ձեռքին է»[84], գրում է «Հորիզոն» օրաթերթը: Այսպիսով, սկսած 1917 թ. հոկտեմբեր ամսից մինչև 1918 թ. թուրքական արշավանքը, թաթարների վայրագությունների հետևանքով Նուխի և Արեշ գավառներում ավերվեցին և կողոպտվեցին 16 հայկական գյուղեր[85] և տեղահանվեցին 6252 հոգի[86]:

Հայ ժողովրդի այս հատվածի նկատմամբ կոտորածներն ու բռնությունները շարունակվեցին հունիս, հուլիս և սեպտեմբեր ամիսների ընթացքում, որոնք պարբերաբար շարունակվեցին ընդհուպ մինչև 1919-1920 թթ.: Օսմանյան Թուրքիայի և մուսավաթական Ադրբեջանի կողմից իրագործված նման քաղաքականության հետևանքով ավերվեցին և թալանվեցին բազմաթիվ հինավուրց հայկական գյուղեր, քարուքանդ արվեցին հայկական եկեղեցիները, որոնց մի մասը պղծվեց՝ վերածվելով մզկիթի: Լիովին բռնագրավվեց հայկական գյուղերի շարժական գույքը, դատարկված գյուղերը

---

83 *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 221 ց. 1, գ. 24, թ. 35-36:*

84 *«Հորիզոն», ապրիլի 23, 1918, թիվ 75:*

85 *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմողներ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1992, էջ 649, նաև Հ. Ա. Ավետիսյան, Նշվ. աշխ., էջ 55, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223 ց. 1, գ. 58, թ. 7, նաև ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 13, նաև ֆ. 245, ց. 1, գ. 5, թ. 10, նաև «Աշխատավոր», մայիսի 21, 1918, թիվ 49, նաև «Մշակ», մայիսի 17, 1918, թիվ 86;*

86 *«Աշխատավոր», մայիսի 21, 1918, թիվ 49:*

բնակեցվեցին լեզգիներով և թաթարներով, որի մատնվեցին մոտ 40 հազար տեղաբնակ հայեր:

Հայ ժողովրդի նկատմամբ կիրառված նման քաղաքականությունը Անդրկովկասում կարելի է որակել միայն ու միայն ցեղասպանություն, որը թուրք-մուսավաթականների կողմից կրում էր հետևողական բնույթ և փաստորեն հանդիսանում 1915-1916 թթ. արևմտահայության կոտորածների շարունակությունը Անդրկովկասում:

ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՄԻ-ի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ